Ուր եւս, խնդրելով ի նմանէ, զի ըստ Հայբախնամ գթոյն, արժանի արասցէ, առ Էջմիածին սուրբ աթոռն, գրել զդիծ ինչ պատասխանի, մեք, ասէ, զթուղթս քո ընկալցուք, իբրեւ զաստուածատուր պատգամս մօսէսի։„

Նամակին թուականը կը նշանակուի այստեղ 1709 փետր. 25 *"որ ըստ թուականին լատինացւոց է 1709 Մարտի ամսոյն 6„* (նոր տոմար)։

2. *Պատմագրութիւն կաթողիկոսաց*, Վենետիկ 1713, սեպտ. 30, էջ 30, *ուր կ'ըսուի Աղեքսանդր Ջուղայեցի կաթողիկոսի համար. "սա յամի 1709 զթուղթս սիրոյն եւ հնազանդութեան տայ։„*

3. Մեկնիչ Սրբոյ Աւետարանին, Հռոմ, 1714, էջ 613—614.

"Բայց փոխանակ ամենայն վկայութեանց լեցին բանք Ղլեոյն զոր յամի Տեառն 1709 Տէր Աղեքսանդր Հայոց կաթուղիկոս գրեաց ի դրանէն սուրբ Էջմիածնի առ սրբազան Հայր մեր Կղեմէս Մետասաներորդ, ոչ միայն յատուկ անուամբ իւրով այլ եւ անուամբն ամենայն ժառանգաւորաց սրբութեան ուխտի, Եպիսկոպոսաց, քահանայից, վարդապետաց, եւ ամենայն կղերիկոսաց Հայոց եկեղեցւոյն։ Գրեալ էր նամակն թուին Հայոց ՌՃԾԸ փետրուարի Ի, որ էհաս ի Հռոմ միւչդեւ անդէն. եւ հրամանաւ սուրբ ժողովոյն թարգմանեցի զնա, ի հայոց լեզուէ, ի լատին բարբառ։ Նամակին վերնագիրն էր այսպէս.

Ժամանեսցէ քարտէզս ի Գահն Հռոմայեցւոց. Ուր եդեալ կայ վէմն հաւատոյ, ի սրբազան ձեռն նորին փոխանորդի Տեառն Գլէմէնտոսի երիցս եր-